Խորհրդարան
ՊՐՈՏԵՐ. ՊՎԵՐ. ԴԵՊԻՔԵՐ...

Մանչեստրի կենդանաբանական այգու դիրեկցիան Ուոլկդեն քաղաքի աշակերտուհիներից մի նամակ ստացավ:

— Որքա՞ն է միջին մեծության փղի կշիռը, ինչպիսի՞ն է նրա ոտքի գրաված տարածությունը,— հարցնում էին դպրոցականները:

Նրանք ստացան անհրաժեշտ տեղեկություններ. դրանց հիման վրա աղջիկները հաշվեցին, որ մոդային «մեխ»-կրունկը գետնի վրա 50 անգամ ավելի մեծ ճնշում է գործադրում, քան փիղը, եթե նա նույնիսկ կանգնի մեկ ոտքի վրա:

* * *



«Իզուր են կարծում, թե կնոջ ոտքի կազմությունն այնպիսին է, որ նրա մեծ մատը մեջտեղում է աճում, իսկ կողքերից՝ երկու փոքրերը»,— այսպես է ասել նորածն սրաքիթ կոշիկների մասին մի անգլիացի բժիշկ:

Մեծ Բրիտանիայի բժշկական ասոցիացիայի կոնֆերանսում միաձայն որոշում ընդունվեց, որը կառավարությանը կոչ էր անում միջոցներ ձեռնարկել չափազանց սրաքիթ կանացի կոշիկների արտադրության և վաճառքի դեմ:

* * *

Երկնագույն վա՞րդ, այո, և դա ռոմանտիկների ու ֆանտաստ գրողների հնարանքը չէ: Հիմա այն աճում է Ռումինիայում, Սև ծովի ափին: Երկարատև ու համառ աշխատանքից հետո այգեգործներին հաջողվեց հատուկ ծաղկանոցներում ստանալ այդ կարմանալի ծաղիկը:

* * *

Հունգարական գիտությունների ակադեմիայի անցկացրած հետազոտությունները ցույց տվեցին, որ մարդը խոսակցության վրա օրական միջին հաշվով կորցնում է մեկ ժամ: Վաթսուն տարվա ընթացքում դա կկազմի մոտ... երկու և կես տարվա անընդմեջ խոսակցություն:

Եթե հնարավոր լիներ հրապարակել այն ամենը, ինչ մարդ խոսում է վաթսուն տարվա ընթացքում, ապա կառաջանար հազար հատորանոց մի գրադարան, որի ամեն մի հատորը բաղկացած կլիներ 500 էջից:

* * *

Շվեյցարիայի հարավում գտնվող Ինսերեռնոս գյուղակի բնակիչները տնից դուրս գալիս իրենց հետ անպայման մի խնձոր են վերցնում: Դա նրանց պաշտպանում է իշայծյամի հետ անախորժ հանդիպումից:

Բանն այն է, որ անցյալ աշնանը գյուղակի բնակիչները իրենց այգիներից խնձորի առատ բերք էին ստացել և դրանով կերակրել էին իշայծյամներին: Բայց գարնան կողմը խնձորի պաշարը սպառվեց, իսկ կենդանիներն առաջվա պես տուրք էին պահանջում համարյա բոլոր նրանցից, ովքեր դուրս էին գալիս գյուղի շրջակայքից:

* * *

Ֆրանսիական ժամացույցի մի ֆիրմա թողարկել է պարող կարթեցուցիչ: Զանգի ժամանակ այն թռչկոտում է սեղանին և քնածի վրա լցնում օծանելիք կամ քթախոտ: Եթե քնածն այնուամենայնիվ չի արթնանում, կարթեցուցիչը սկսում է «դուփել» ոտքերով, որը ենջարանում հնչում է որպես օտար մարդու ոտնաձայն:

digitised by A.R.A.R.@

* * *

Վաթսուն տարի առաջ ֆրանսիացի Օնորե Պեդրեն պատահաբար նկատեց, որ թելից կախված փոքրիկ քարը գեղեցիկ հնչյուն է արձակում: Այն ժամանակ նա վճռեց հավաքել այնքան քարեր, որ հնչեն երկու օկտավայի սահմաններում:

Բեդրեն 30 տարի նվիրեց երաժշտական քարեր փնտրելուն: Նրա հավաքած «լարերը» իրենց ձևով, չափով և գույնով տարբեր են:

«Քարե» դաշնամուրը բավական գրավիչ տեսք ունի: Մետաղե կորպուսի մեջ, մետաքսե թելերից կախված են գույնզգույն քարեր: Հատուկ փոքրիկ կայծքարով պարկում են այդ կախովի ստեղներին: Ըստ որում հարկավոր է ճիշտ իմանալ հարվածի տեղը, որովհետև միևնույն քարը կարող է տարբեր հնչյուններ արձակել:

Պեդրեն իր ստեղծած գործիքով կատարում է և՛ պարզ ժողովրդական մեղեդիներ, և՛ բարդ դասական ստեղծագործություններ:

* * *

Կենդանիների և բույսերի մեծ մասի մոտ լավ զարգացած է ժամանակի զգացումը: Գիտնականներն այդ հատկությունն անվանում են «բիոլոգիական ժամացույց», բայց դրանից նրանց մեխանիզմն ավելի պարզ չի դառնում: Այդպիսի ժամացույցներ նույնիսկ բակտերիաներն ունեն: Բիոլոգիական ժամացույցի տիրոջ կլասիկ օրինակը աքաղաղն է: Իսկ ավստրալիական ալկիոն թռչունի քրքիջով կարելի է ժամացույցները ստուգել այնպես, ինչպես ճշգրիտ ժամանակի ռադիոազդանշաններով: (Ի միջի այլոց կուկաբառայի ճիչը ավստրալիական ռադիոյի ազդանշաններն են):



* * *

Թե որքան քիչ հաճույք կարող է պատճառել մարդուն ինչ-որ մեկին նմանակ լինելը, շատ լավ զգացել է լոնդոնցի ոմն Ջիլ Պրովենտը: Ոստիկանությունը 38 անգամ ձերբակալել ու ապատ է արձակել նրան, պատճառն այն է, որ վերջինս զարմանալիորեն նման է եղել մի հանցագործի:



* * *

Անգլիական Նորիջ քաղաքի հանրային գրադարանի դիրեկցիան գրքերը ժամկետին չվերադարձնող բաժանորդներին հայտարարեց, որ նրանք ազատվում են տուգանքից: Եվ ահա ընթերցողներից մեկը ներկայանում է գրադարան և առաջարկում ընդունել իր «պարտքը»: Բեռնատար ավտոմեքենայով գրադարան է բերվում 299 կտոր գիրք, որոնք «մոռացկոտ» ընթերցողի կողմից հավաքվել էին 14 տարվա ընթացքում...

* * *

Ամերիկացի ինժեներ Տրոպեանոն առաջարկել է ջերմոցների նոր նախագիծ, որոնք չունեն... տանիք: Վերջինիս փոխարինում էր արհեստական մշուշը, որն առաջանում էր գոլորշիով ջերմացված ածուների վրա ջուր շաղ տալուց: Մի անգամ սարքի փորձարկման ժամանակ շոգեկաթսան փչացավ, և խողովակներում գոլորշու փոխարեն ջուր առաջացավ: Ածուների վրա ձյուն տեղաց: Բայց հնարամիտ Տրոպեանոն այստեղ էլ իրեն չկորցրեց, նա անմիջապես հեղինակային իրավունք պահանջեց ձյուն արտադրելու համար...

digitised by A.R.A.R.@

* * *

Ֆրանսիական օրենքով կինը կարող է մեքենա վարել միայն այն դեպքում, եթե նրա հագի կոշիկները ցածրակրունկ են: Իսկ եթե հանկարծ ավտովարորդի տեղը գրավում է նորաձևության մի սիրահար՝ բարձրակրունկ «մեխ» կոշիկներով, ապա ավտոմատ սարքը անմիջապես անջատում է շարժիչը:



Կանկաս-Սիտիում նոր լվացքատան սեփականատերերը որոշելով իրենց հիմնարկության համար բարի համբավ վաստակել, հենց առաջին պատվիրատուին հանդիսավորապես հանձնեցին մի փաստաթուղթ, որը նրան իրավունք էր տալիս մինչև կյանքի վերջն անվճար լվացման տալու իր և իր տնեցիների սպիտակեղենը: Բայց պարզվեց, որ այդ պատվիրատուն հարևան պանսիոնատի կառավարիչն է, որտեղ ապրում է 1220 աշակերտ:

* * *

Սրտի յուրաքանչյուր տրոփյունի հետ մարդը, Երկրի հետ միասին, տիեզերական տարածության մեջ տեղաշարժվում է մոտ 30 կիլոմետր:



Նյու-Յորքցի Սեմյուել Սկոտը օրիգինալ ձևով է լուծել 24-ժամյա աշխատանքի պրոբլեմը: Սկոտն աշխատում է Բրոդվեյում որպես գիշերային պահակ, իսկ ցերեկը քնում է... կահույքի խանութներից մեկի ցուցափեղկում՝ որպես մահճակալներ ռեկլամող:

* * *

Անգլիական Նորֆոլկ կոմսության ծովափնյա մասում մակընթացությունը հաճախ փոկերին իրենց ձագերի հետ ափ է շպրտում: Տեղատվության ժամանակ փոքրիկները հաճախ չեն կարողանում ծնողների հետ ծով վերադառնալ և մնում են ցամաքում: Ահա այդ ժամանակ նրանց օգնության են գալիս մարդիկ: Սնեստիսհեյմ ծովափնյա փոքրիկ քաղաքի բնակիչները նրանց տանում են տուն և մի քանի շաբաթ շարունակ կերակրում ձկան յուղի, կաթի և լյարդի խառնուրդով: Երբ փոկերը մեծանում և կարողանում են ինքնուրույն կերպով սնունդ հայթայթել, նրանց նորից բաց են թողնում ծով:

***

Լոս-Անջելոսի դատարանի շենքը պահպանող ոստիկաններին պարմացրել էր չղջիկների չափազանց տարօրինակ վարքը: Այդ գիշերային կենդանիները, որ ապրում էին շենքի ձեղնահարկում, օրը ցերեկով դեսուդեն էին նետվում քաղաքի փողոցներում: Պարզվեց, որ նրանց ցերեկային ճանապարհորդությունը սկսվել է այն բանից հետո, երբ շենքի սենյակներից մեկում դրվել է մաքսանենգներից բռնագրավված մարիխուանա թմրադեղը: Չղջիկները թափանցել էին այնտեղ, համտեսել այն և դադարել էին ցերեկը տարբերել գիշերվանից:

digitised by A.R.A.R.@